ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Թանկագի՛ն տարեցներ, սիրելի՛ ծնողներ, պապիկնե՛ր, տատիկնե՛ր, այսօր՝ Տարեցների միջազգային օրվա առթիվ, ուզում եմ հարգանքս և խոնարհումս հայտնել ձեզ՝ ձեր վաստակի, փորձառության, իմաստության և ապագա սերունդներին փոխանցող ձեր բարի խորհուրդների համար:

Ձեր բարի խոսքով, տեղին ու ժամանակին արված դիտարկումներով ու դիտողություններով դուք շարունակում եք մեծ ներդրում ունենանալ նաև մեր երկրի, մեր համայնքի զարգացման գործում: Առանց մեծի փորձի ու խորհրդի երիտասարդ սերունդը դժվարությամբ կհաղթահարի իր առջև դրված մարտահարավերները:

Մեր պետությունն էլ այսօր իր հնարավորությունների սահմաններում ձգտում է առավելագույնն անել տարեցների համար հնարավորինս արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու համար:

Հարգելի՛ տարեցներ, սիրելի՛ ծնողներ, պապիկնե՛ր, տատիկնե՛ր ևս մեկ անգամ շնորհավորելով ձեզ այս գեղեցիկ օրվա առթիվ՝ մաղթում եմ առողջություն, երկար տարիների կյանք, լավատեսություն և արժանապատիվ ծերություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ